ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ
(1881—1960)

Մարտի 27-ին, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիցագույն միաբան գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։

Հանգուցյալը ծնվել է Վաղարշապատում 1881 թվականի փետրվարի 3-ին։ Նախնական կրթությունն ստացել է ծխական դրպրոցում և ապա ընդունվել Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որն ավարտել է 1907 թվականին։ 1905—1920 թվականներին աշխատել է Ս. Էջմիածնի Սինոդում որպես քարտուղար։ Այնուհետև զանազան հաստատություններում վարել է պատասխանատու պաշտոններ։

1944 թվականին մտնում է Մայր Աթոռի միաբանների շարքը որպես վարդապետ։

1945 թվականին նշանակվում է Իրանահնդկաստանի թեմի հայոց առաջնորդ և նույն թվականի ամռանը եպիսկոպոս է ձեռնադրվում։ Մինչև 1949 թվականի հոկտեմբերի 22-ը նա պաշտոնավարում է Իրանում։ Այնուհետև Մայր Աթոռում կոչվում է պատասխանատու պաշտոնների և արժանավորությամբ ծառայում Ս. Էջմիածնին։ Երկար ժամանակ նա եղել է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Մայր Տաճարի լուսարարապետ և Վրաստանի հայոց թեմի առաջնորդ։

Վերջին շրջանում, իր հիվանդության պատճառով, սրբազանը հանգստյան էր կոչվել և Մայր Աթոռում իր երջանիկ ծերությունն էր անցկացնում։

Հանգուցյալի մարմինը Մայր Տաճար իջեցվեց մարտի 29-ին, երեկոյան ժամը 7-ին։

Մարտի 30-ին, Մայր Աթոռի ամբողջ միաբանության, վանքի պաշտոնեության, հանգուցյալի հարազատների և հավատացյալների ներկայության կատարվեց վերջին օծումը և թաղման կարգը։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և օծման կարգը կատարեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Օծումից հետո, «Ողջո՛յն քեզ Ս. Եկեղեցի, ողջո՛յն քեզ Սեղան Սրբութեան, ողջո՛յն քեզ դասք քահանայից, ողջո՛ւյն ձեզ սիրելիք իմ» բանաբանով գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը հուզիչ և գեղեցիկ դամբանականով վեր հանեց հանգուցյալի էջմիածնավեր ծառայությունը։

Ժամը 1-ին, Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի նախագահությամբ, թափորը շարժվեց դեպի Ս. Գայանեի վանքը, ուր պետք է ամփոփվեր հանգուցյալի աճյունը։

Մայր Աթոռի միաբաններն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողները ուսամբարձ դուրս են բերում դագաղը Մայր Տաճարից։ Թաղմական թափորը, շարականով և աղոթքով առաջնորդվում է Ս. Գայանեի վանքը։

Գերեզմանի վրա կատարվում է վերջին կարգը։ Ապա հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի դամբանական է խոսում գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Ակնավուրյանը, իսկ հանուն Մայր Աթոռի աշխարհիկ պաշտոնեության՝ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Թաղումից հետո, Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տրվեց հոգեճաշ, որին ներկա էին նաև հանգուցյալի հարազատները։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։